ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Պատվիրատուն՝ ՀՀ մշակույթի նախարարությունը, ստորև ներկայացնում է իր կարիքների համար պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և դրանց տարածքների վավերագրման և ուսումնասիրման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ***ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/31*** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում **2018 թվականի մայիսի 17-ին** կնքված N ***«ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/31»*** ծածկագրով պայմանագրում **2018 թվականի հունիսի 28-ին** կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1: ՀՀ Արագածոտնի մարզի Օրգով (նախկինում՝ Բյուրական) համայնքի Ամբերդ ամրոցի վթարային հատվածների և դրանց տարածքների վավերագրման և ուսումնասիրման (այդ թվում՝ պեղման) աշխատանքները պատշաճ կատարման համար Կատարողի կողմից առաջարկվել է պայմանագրի ժամկետը երկարաձգել մինչև 30 օրացույցային օրով:

Փոփոխության նկարագրություն N 1: Պայմանագրի Հավելված թիվ 1-ում Աշխատանքների կատարման ժամկետի երկարաձգում մինչև 2018 թ.-ի հուլիսի 27-ը:

Փոփոխության հիմնավորում N 1: Հուշարձանի ուսումնասիրման և վավերագրման ընթացքում մանրակրկիտ հետազոտություններ կատարելու և տվյալների ճշգրիտ հավաքագրման անհրաժեշտություն:

Փոփոխության հիմնավորում N 2: ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 56-րդ կետի 4-րդ ենթակետ :

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Ն. Կարապետյանին:

Հեռախոս՝ 011 58-51-78:

Էլ. փոստ՝ cultproject@mail.ru:

Պատվիրատու՝ ՀՀ մշակույթի նախարարություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՎԱՎԵՐԱԳՐՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/31 ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «28» 06 2018 թ.

ՀՀ մշակույթի նախարարությունը, ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող աշխատակազմի ղեկավար Ս. Մուրադյանի (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԹԻՎ 28 ՇՄՇ» ԲԲԸ-ն, ի դեմս տնօրեն Թ. Գափոյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հիմք ընդունելով կողմերի միջև 2018թ. Մայիսի 17-ին կնքված պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և դրանց տարածքների վավերագրման և ուսումնասիրման աշխատանքների պետական գնման N ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/31 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.6 կետերը և առաջնորդվելով ՀՀ Կառավարության 2017թ. Մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 56-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Պատվիրատուն և Կատարողը համաձայնության են եկել Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.2 Պայմանագրի Հավելված 1-ի՝ ՀՀ Արագածոտնի մարզի Օրգով (նախկինում՝ Բյուրական) համայնքի Ամբերդ ամրոցի վթարային հատվածների և դրանց տարածքների վավերագրման և ուսումնասիրման (այդ թվում՝ պեղման) աշխատանքների Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցերում աշխատանքների կատարման ժամկետը՝ «30 հունիս 2018թ.» բառերը փոխարինել «27 հուլիս 2018թ.» բառերով:

2. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև Պայմանագրով սահմանված երկու Կողմերի պարտավորությունները լրիվ ծավալով ու պատշաճ կատարելու ավարտի ժամկետը:

2.2 Կողմերի միջև ձեռք բերված՝ սույն համաձայնագրին հակասող բոլոր նախկին պայմանավորվածությունները դադարում են գործել սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից:

3. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

3.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3.2. Կողմերի պատասխանատվությունը որոշվում է Հայաստանի հանրապետությունում գործող օրենսդրությանը համապատասխան:

3.3 Սույն համաձայնագիրը և հավելվածները կազմված են 2 (երկու) էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ մշակույթի նախարարություն Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3 Կառավարական շենք N 2, հեռ.՝ (011) 58-51-78 ՀՎՀՀ 02508054, հ/հ 900011017713 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչությունում	«Թիվ 28 ՇՄՇ» ԲԲԸ Հասցեն՝ ք.Գավառ, Ազատության 2 հեռ.՝ +374-93-185518, +374-77-111559 էլ. փոստ՝ hvarlen@mail.ru ՀՎՀՀ 08409435, հ/հ 24718000010720000 «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ, «Կամո» մասնաճյուղ
Աշխատակազմի ղեկավար՝	Տնօրեն՝
Ս. Մուրադյան (ստորագրություն)	Թ. Գափոյան (ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ